Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-646[3]-19.06.2009-ՖՎ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 27-րդ կետի տեքստից հանել «և վարկային կազմակերպությունը» բառերը:

Հոդված 2.
1. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ կետը.
2. Օրենքի 27-րդ հոդվածը լրացնել 3.1 մասով հետևյալ բովանդակությամբ՝
«3.1 Վարկային կազմակերպությունները կարող են իրականացնել ներդրումային ծառայություններ, ինչպես նաև սույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ոչ հիմնական ծառայություններ բացառապես «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3.1 մասի շրջանակներում:»:

Հոդված 3. Օրենքի 35-րդ հոդվածում՝

1. Վերնագրից և ամբողջ տեքստից հանել «և վարկային կազմակերպությունները» և «, վարկային կազմակերպությունը» բառերը իրենց բոլոր հոլովումներով:
2. Ուժը կորցրած ճանաչել 4-րդ մասը:

Հոդված 4. Օրենքի 50-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «և վարկային կազմակերպությունների» բառերը:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը լիցենզավորված ներդրումային ընկերությունները պարտավոր են սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից վեց ամսվա ընթացքում իրենց գործունեությունը համապատասխանեցնել սույն օրենքի պահանջներին:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

««Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ 1-ին ընթերցումից հետո ստացված դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ 1-ին ընթերցումից հետո ստացված դիտողությունների և առաջարկությունների

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, մաս, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը	Նախագծի վերաբերյալ առաջարկությունը	Եզրակացություն
1	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մաս	««Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի առաջարկություններով պայմանավորված երկու օրենքների միջև հակասություններ չառաջանալու համար անհրաժեշտ է նախագծի 2-րդ հոդվածը լրացնել նոր մասով հետևյալ բովանդակությամբ՝ «3.1 Վարկային կազմակերպությունները կարող են իրականացնել ներդրումային ծառայություններ, ինչպես նաև սույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ոչ հիմնական ծառայություններ բացառապես «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3.1 մասի շրջանակներում:»:	Ընդունվել է:
2	ՀՀ կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	Նոր ստեղծվող կազմակերպությունների և գործող կազմակերպությունների համար հավասար իրավական դաշտ ապահովելու համար առաջարկում ենք նախագծում ավելացնել անցումային դրույթ, որի համաձայն մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը լիցենզավորված ներդրումային ընկերությունները պարտավոր են սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից վեց ամսվա ընթացքում իրենց գործունեությունը համապատասխանեցնել սույն օրենքի պահանջներին:	Ընդունվել է: